

ISSN 0321-0405

ԲՈՒԺԵՐ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

3



2008

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՅՑ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

# ԲԱՆԱԳՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՅՑԻ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ՀԱՍՏԱՏՈՒՅՑԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐ  
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ

3(126)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՅՑԻ ՅՐԱՏԱՐԱԳՈՒՅՔՆ  
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

ԵՐԵՎԱՆ - 2008

Այս ամենը վկայում է այն մասին, որ մեկնությունն ունի իր առանձնահատկությունները: Նախ, փաստերի մեկնարանությունից այն տարրերվում է իմացության իր օբյեկտով, որը տեքստն է, իսկ ինտերպրետացիայից տարրերվում է տեքստի բնույթով, որը շարադրված է ոչ թե արհեստական (ձևական կամ ձևայնացված), այլ բնական լեզվով և ըստ այդմ պարունակում է բազմանշանակության հնարավորություն: Երրորդ, մեկնության հարակից հասկացությունը հասկացումն է, ավելին՝ մեկնությունը կամ բխում է հասկացումից, կամ անմիջականորեն կապված է նրա հետ: Երրորդ, ի սկզբանե դիտվել է որպես որիշի գիտակցության մեջ ներթափանցելու միջոց, ինչի շնորհիվ պատմականորեն ծեռք է բերել էրգիստենցիալ-մշակութաբանական բնույթ: Չորրորդ, իր կառուցվածքով ևս մեկնությունը տարրերվում է թե ինտերպրետացիայից, թե մեկնարանությունից: Մեկնության մեթոդի կառուցվածքային առանձնահատկությունը հերմենևտիկական շրջանն է:

Այսպիսով, «ինտերպրետացիա» են անվանվում միմյանցից տարրեր գիտական երեք մեթոդներ, որոնք, անկասկած, պետք է ստանան իրենց տերմինարանական տարրերակած արտահայտությունները ևս, առավել ևս այն պատճառով, որ հայերենի հարուստ բառապաշարն այդ հնարավորությունը տալիս է մեզ: Ըստ այդմ, հաշվի առնելով մեթոդաբանական առանձնահատկությունները, առաջարկում ենք «ինտերպրետացիա» տերմինը կիրառել նշանային համակարգերի սեմանտիկական նշանակության պարզաբանման դեպքում, իսկ «փաստերի ինտերպրետացիան» և «տեքստերի ինտերպրետացիան» փոխարինել համապատասխանաբար «մեկնարանություն» և «մեկնություն» տերմիններով:

**С. В. ВАРТАНЯН – Некоторые соображения относительно применения термина «интерпретация».** – В современной философской и методологической литературе термин «интерпретация» приобрел многозначный характер, поскольку он может пониматься по-разному: а) интерпретация знаковых систем, б) интерпретация фактов, в) интерпретация текстов. Исходя из того, что используемые в указанных областях методы своей методологической спецификой отличаются от метода интерпретации, предлагается «интерпретацию фактов» заменить «истолкованием», «интерпретацию текстов» – «толкованием», а термин «интерпретация» употреблять для пояснения семантического значения знаковых систем.

ԲՈԼՃԵՎԻԿՆԵՐ-ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ  
(1917 թ. դեկտեմբեր - 1918 թ. հունվար)

### Ս. Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայտնի է, որ խորհրդային պատմագրությունը գրեթե 70 տարի խեղարյութել է պատմության շատ էջեր՝ նպատակ ունենալով ամեն կերպ բարցնել խորհրդային վարչակարգի թերացումներն ու թույլ տված սխալները: Սակայն այսօր, երբ արդեն մատչելի են նախկինում արգելված նյութերը, անհրաժեշտ է վերանայել պատմության շատ հարցերից է 1917-1918 թթ. ընթացքում դաշնակցության ու բոլշևիկների միջև ձևավորված հարաբերությունները: Այս խնդրի համատեքստում է նաև մեզ հետաքրքրող թեման՝ բոլշևիկների ու դաշնակցության միջև Թիֆլիսում կայացած բանակցությունները, որի հիմնական աղյուրը Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» աշխատությունն է<sup>1</sup>: Թեմային անդրադեկան են հիմնականում երկու պատմաբան՝ Լ. Խուրշույանը<sup>2</sup> և Ռ. Փիրումյանը<sup>3</sup>: Վերջինս, դաշնակցականամետ հեղինակ լինելով, զարմանալիորեն բոուցիկ կերպով է անդրադանում հարցին: Իսկ Լ. Խուրշույանը, ժամանակի պահանջներից ելնելով, օբյեկտիվ չի նոտենում առաջադրված խնդրին: Ի մի բերելով թեմայի վերաբերյալ նախկինում հայտնի, ինչպես նաև նոր աղյուրներն ու նյութերը՝ կփորձենք ներկայացնել խնդրի իրական պատկերը:

Մինչ Պետրոգրադում նախապատրաստվում էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, 1917 թ. դեկտեմբերի 16-ին Ժողկոմխորի Լենինի նախագահությամբ որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար<sup>4</sup>: Վերջինս, համաձայն «Թուրքահայաստանի մասին» դեկրետի, պետք է ապահովեր դրա իրականացումը տեղում, և թվում էր, թե կոմիսարի պաշտոնում նրա նշանակվելը այդ գործընթացի տրամարանական շարունակությունն էր: Սակայն հենց պաշտոնի անվանումը հուշում էր, որ Մոսկվայում որոշել են կրկին վերահսկողություն սահմանել Կովկասի ժողովուրդների վրա: Դեկտեմբերի 18-ին Լենինի կողմից ստորագրված մանդատն ու 500.000 ռուբլին մեծ դժվարություններով

<sup>1</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Պէյլուք, 1979, էջ 137-144:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Խուրշույան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977, էջ 55-69:

<sup>3</sup> Տե՛ս Ռ. Փիրումեան, Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում (1917-1921), Եր., 1997, էջ 64-69:

<sup>4</sup> Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 1960, № 100, էջ 143:

Թիֆլիս է քերում Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյանը): Այն փաստը, որ Կամոն Թիֆլիսից Բաքու չգնաց, այլ զաղինակառակը, հունվարի 6-ին Շահումյանը ուղևորվեց Թիֆլիս, խոսում է այն մասին, որ բոլշևիկները կրկին փորձելու էին Թիֆլիսում իշխանությունը վերցնել իրենց ծեռքը: Սակայն երկրորդ անգամ Շահումյանը պետք է որ դաս քաղած լիներ նախկին անհաջողությունից և դաշնակցներ փնտրեր «թիֆլիսյան ճակատում»: Անգործ չէր նաև հակաբոլշևիկյան «մենշևիկ-մուսավար բլոկը»: Թիֆլիսում մենշևիկները, համագործակցելով մուսավարի հետ, ծրագրում էին ճակատից տուն վերադարձող ոուս զինվորներին բալանելու միջոցով զինել իրենց ռազմական ստորաբաժանումները: Հենց Շահումյանի՝ Թիֆլիս ժամանելու առաջին օրերին մենշևիկանուավարական զինված ուժերը ծեռնարկեցին հերքական «քալանչիական արշավանքներից» մեկը նահանջող ոուս զինվորների նկատմամբ: 1917թ. հունվարի 8-ից 10-ը Շամխոր կայարանի մոտ տեղի ունեցավ ոուս զինվորների կոտորած: Այն իրազորդողները Մուսավարի և Գանձակի մահմեդական ազգային խորհրդի վերահսկողության տակ գտնվող զինված ուժերն էին: Շամխորի կայարանի դեպքերի մասին Վրացյանի գրած տողերից հայտնի է դատնում, որ «... այդ հարձակմանը անմասն չին և վրացի վարիչներից ունանք»<sup>5</sup>: Կարելի է դատել, որ վրաց մենշևիկները Թիֆլիսում իրենց ծրագրերի մասին չին բարձրածայնում, հակառակը՝ ճգոտում էին քողարկել դրամբ: «Վրացի վարիչներից» մեկն էլ Ն. Ռամիշվիլին էր: Վերջին Անդրկովկասի կոմիսարիատի հունվարի 6-ին կայացած նիստի գեկույցում նշում էր նոյն «ոուս զինվորների զինաքախման» և նրանց գենը վրացական կորպուսին հանձնելու անհրաժեշտության մասին<sup>6</sup>: Այս քայլով մուսավարն ու վրաց մենշևիկները բացահայտում էին իրենց հակառասական տրամադրությունները՝ միաժամանակ հայացք թերելով դեպի Քառյակ միուրյուն, որի աջակցությունը կարող էին ստանալ նման «օգտավետ» գործողությունների շնորհիլ: Այդ գործողություններով նաև բոլոցնում էին բոլշևիկներին, որովհետև նահանջող ռուսական գրքերի մեջ նրանք մեծարիկ համակիրներ ունեին: Բնական է, որ հենց նման զինվորներն էլ պետք է համալրեին բոլշևիկների զինված ստորաբաժանումները Անդրկովկասում: Պարզ էին նաև մենշևիկների ծրագրերը քողարկելու պատճառները: Նրանք հավանաբար զիտակցում էին, որ Ղաշնակցությունը այս հարցում չէր կարող իրենց աջակից լինել, քանի որ դա չէր բխում նրանց շահերից: Ավելին, Ղաշնակցությունը ճգոտում էր ոուսական զինված ստորաբաժանումները ամեն գնով պահել Անդրկովկասում, առավել ևս՝ Հայատանում, քանի որ նրանք հայերի ֆիզիկական անվտանգության իրական երաշխիք էին:

Հետագայում մենշևիկներն ու հատկապես Մուսավարը նման խոչընդոտներ էին ստեղծում ցարական և Անտանտի բանակի կազմում ծառայած այն հայ զինվորների համար, որոնք փորձում էին Հայաստան վերադառնալ: Համաձայն խորհրդահայ պատմագրության մեջ եղած տեսակետի՝ քանի որ դեպի Թիֆլիս տանող ճանապարհները գտնվում էին մուսավարական ուժերի վերահսկողության տակ, և նրանց շրջանցելը բավականին

<sup>5</sup> Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 60:

<sup>6</sup> Տե՛ս նոյն տեղը:

դժվար էր, Շահումյանը ստիպված էր 6 օրով կանգ առնել Ելիզավետապոլս՝ կյուրենկալվելով տեղի բոլշևիկյան կառույցի ղեկավար Ասրանազ Մոավյանի մոտ: Այստեղից նա հունվարի 13-ին երեք հոգու ուղեկցությամբ շարունակում է ճանապարհը: Անցելով հայաբնակ շրջաններով՝ նա հունվարի 22-ին հասնում է Թիֆլիս:<sup>7</sup> Ուշագրավ է, որ Լ. Խուրշուլյանը, ներկայացնելով Շահումյանի և ղաշնակցական գործիչների միջև տեղի ունեցած բանակցությունների մասին ղաշնակցական Ռուբենի հայտնած տեղեկությունները, լրույթան է մատնում Թիֆլիս անցնելու հարցում Շահումյանին ղաշնակցականների ցուցաբերած օգնության մասին նոյն հեղինակի պատմածները:<sup>8</sup> Խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ համագործակցության հարցում միակ շահագրգիռ կողմը Ղաշնակցությունն էր, որի վրա էլ ընկնում էր դրա ծախողման պատասխանատվությունը:<sup>9</sup> Իրականում բոլշևիկները և իրենց մեղքի բաժինը ունեին, որը նրանք չեն ցանկանում ընդունել: Խնդիրը հասկանալու համար ամրող ցուրյամբ ներկայացնենք թիֆլիսյան բանակցությունների պատմությունը, որտեղ պարզվում են ծրագրի շիրականացման պատճառները: Ռուբենի գըրքում մենք կարդում ենք. «Երկու անգամ Ղանուշ Շահվերդեանի տանը տեսակցությիւններ լինելուց յետոյ, վերջնական ծրագրի կը մշակուի հայ-բոլշևիկ համագործակցութեան, Ելիզավետեան փողոց թիւ 194 տան մէջ»<sup>10</sup>: Թիֆլիսյան բանակցությունները սկիզբ են առել դեռ 1917թ. նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին: 1917թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 8-ը Թիֆլիսում ընթանում էր ղաշնակցության հատուկ ժողով, որին մասնակցում էին Ս. Հարությունյանը (ժողովի նախագահ), Արամը, Կոմսը, Ն. Աղբայանը, Ս. Արարատյանը, Վ. Խորենին, Հովհ. Ամասունին, Ալ. Խատիսյանը, Վ. Նավասարդյանը, բժ. Մելքոնյանը, Սարենիկ Արդությանը, Գ. Շամոյանը, Ե. Իշխանյանը, Ռ. Տեր-Սիմանյանը, Մ. Արզումանյանը<sup>11</sup>: Ժողովի նիստերից մեկում որոշվում է բանակցություններ սկսել նաև բոլշևիկների հետ: Սարգիս Արարատյանը, լիազորված ժողովի կողմից, ղեկտեմբերի 4-ին հանդիպում է նշանակում այդ օրերին<sup>12</sup> Թիֆլիսում գտնվող Ստ. Շահումյանի հետ, որին դեպքերի բերումով մասնակցում է նաև ղաշնակցական Եղիշե Իշխանյանը: Արարատյանին ուղղված Շահումյանի այն հարցին, թե իրենք ինչ են մտածում անել, Արարատյանը պատասխանել է. «Այդ հարցը ես պետք է տամ ծեզ: Իշխանությունները դուք եք առել ձեր ծեռքը, զօրքը հմայած դրէալի տուն» նշանաբանով, ներկացնում է ռազմաճակատը, լայն քաց անելով ճամբան թշնամու առաջ: Դուք է, որ պարզ ու որոշ պիտի ասէք, թէ ինչ էք անելու: Արդեօք, գէք ճակատը պահելու համար, կարո՞ղ էք պահել զօրքը իրենց տեղերում, թէ՞ ոչ: Զեր հաստատուն դրական որոշումից է կախած խնդիրի լուծումը:

<sup>7</sup> Տե՛ս Լ. Խուրշուլյան, Ստեփան Շահումյան. պետական և պարտիական գործունեությունը 1917-1918թթ., Եր., 1959, էջ 148-149, նաև՝ Գ. Ակոպյան, Ստեփան Շահումյան. Ղանչը և գեյտելունք (1878-1918), Մ., 1973, էջ 162-163:

<sup>8</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 141:

<sup>9</sup> Տե՛ս Լ. Խուրշուլյան, Ստեփան Շահումյան ռուսական Ռուբենում..., էջ 57-58:

<sup>10</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 141-142:

<sup>11</sup> Տե՛ս Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Եր., 1999, էջ 52:

<sup>12</sup> Տե՛ս Ստ. Շահումյան, Երկրի լիազատը ժողովածու, հ. 4, Եր., 1978, էջ 353:

- Գիտէ՞ր ինչ, պէտք է նկատի ունենաք մի բան, որ երկար ժամանակ աշխատած լինելով վրացի մեծչիկների հետ, նրանց ես,- ընդգծում է Շահումյանը,- աւելի լաւ եմ ճանաչում, քան դուք: Գիտեմ, նրանք ուզում և աշխատում են, որ իրենց հետ լինեք ու միասին աշխատէք. մեզ շատ լաւ յայտնի է այդ բանը: Նրանք եւ, դուք էլ ազգային կուսակցութիւն եք, սակայն, չեմ քաջնում, նրանք շովիմիստ, թրու ազգայնամոլ են և սեպարատիստ, դուք շովիմիստ չեք և սեպարատիստ չեք, մի բան որի մէջ համոզած են: Այնպէս որ մեզ համար ձեռնոտու է ձեզ հետ բոլոկ կազմել: Եւ երէ դուք մեզ հետ լինեք, մենք կը կարողանանք պահել զօրքը:

- Սակայն ին՞չպէս կարող եք պահել, երբ զօրքի մէջ կարգապահութիւնը բոլորովին խախտուել է, կարգ ու կանոնի ենթակա չէ և չի ուզում ենթարկել:

- Զօրքի մէջ կամ բարական զիտակից տարրեր, որոնք նկատում են, որ տեղական ժողովուրդներից հայերը բարեացակամ վերաբերմունք ունեն ուսունեած և երբ բոլոկ կազմի, մենք կը կարողանանք օգտագործել զիտակից տարրերին ու ցանկալի արդիւնք ունենալ. մենք վստահ ենք, որ յաջողութիւն կունենանք:

Այսպէս բարական տևեց փոխասացութիւնը նրանց միջև. եզրակացութիւնն այն էր, որ երկուատէք մտածեն, կրկին հանդիպումներ ունենան:

Արարատեանը Շահումեանի հետ ունեցած զրոյցը նոյնուրեանք զեկուցեց խորհրդաժողովին, որը պարզապես տատանման մէջ էր՝ ո՞ր կողմը հակիել: Կտրուկ որոշում կայացնել չէր կարողանում, բնական ու հասկանալի աննպաստ պայմանների պատճառով»<sup>13</sup>: Քանակցությունների ավարտական փուլի մասին Ռուբենը գրում է. «Այն նոյն օրը երբ Անդրկովկանան վարչութիւնը հրաման կը հանէր գտնել Շահումեանին եւ զայն ձերքակալել, երբ Երզնկեան եւ Ղազարեան՝ Շահումեանի գլուխը կը պահանջին Ազգային Խորհուրդից՝ Ազգային Խորհուրդի գինուրբական ուժերի վարիչ Ռուբեն Տէր Մինասեանը եւ Զարիեւը Շահումեանի հետ զործուելութեան նախագիծ կը կազմէին, Երեւանից ունենալով եւ Արամի կարծիքները: Գործունեութեան նախագիծը կը կայանար հետեւեալ հարցերում.

1. - Տաճկահայաստանը պիտի լինի անկախ. դիմադրութիւնը պիտի շարունակուի բուրքերի դէմ. Շահումեանը պիտի ջանայ, որ ոուս զօրքերը մնան ճակատում:

2. - Անդրկովկասում ստեղծում է հայկական կանոն, ըստ Շահխառուն սահմանագծման ծրագրի:

3. - Թիֆլիսն ու Բագուն լինելու են ազատ քաղաքներ:

4. - Սարիլամիշ - Կարս հասած 39-րդ զօրարածինը պիտի պահել Հայաստանում:

5. - Պարսկաստանից նահանջող Բարաքովի զօրամասերից մի զօրաքամին կանգնեցնել Զոլֆա - Նախիջեանում:

6. - Ուժեղացնել Գանձակի հայկական մասը ուազմամբերքներով՝ հոն փախարքելով Ալեքսանդրապոլի պահեստներից:

7. - Թիֆլիսում կազմուած դարարադիների գունդը ուղարկել Շուշի եւ ուժեղացնել Ղարաբաղը:

<sup>13</sup> Ե. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 56-58:

8. - Թիֆլիսի մօտ (Տրեխովերոսկայ) հաւաքուած զօրքերը ուղրով ուղարկել Գանձակ, Ղազախի վրայով:

9. - Բագուից, Գանձակից, Շուշից ուժերը շարժել եւ Բագու - Թիֆլիս, Բագու - Երեւան ճանապարհը բանալ:

10. - Մինչեւ այդ գործողութեանց լինելը, բոլշևիկները կը մնան հանգիստ եւ յեղաշրջման մասին չեն մտածեր:

11. - Չեմլեակի խումբը, երրորդ հայկական գունդը, Օսիկ Փիրումեանի հեծելազօրը, Մովկէսեանի հրետանին, պիտի մնան Թիֆլիսում. երբ Շուշի - Բագու գիծը բացուի, այդ ուժերը, կրիկ կազմելով, պիտի համախըմբեն իրենց շուրջը բոլշևիկ ուժերը եւ պիտի յեղաշրջում կատարեն: Մինչ այդ, թէ Երեւանը եւ թէ Թիֆլիսը պիտի մնային ծննականօրէն հակառակ բոլշևիկ շարժման եւ պիտի պաշտպանէին եղած դրութիւնը:

Այս ծրագրի մեծ մասը անհնարին եղաւ իրագրծել: Շահումեանը, որ Ալեքսանդրապոլ էր անցած, չկարողացաւ խուժան դարձած զօրամասերին խօսք հասկցնել: Գանձակը ուժեղացուեց. Ղարաբաղի գունդը դժուարութեաց հանդիպեց հասնելու Շուշի. իսկ Բագուն չկարողացաւ կապուել Շուշի եւ Գանձակի հետ»<sup>14</sup>: Այն, ինչ տեսնում ենք այս ծրագրում, ամենեկին չի համապատասխանում «Թուրքահայաստանի մասին» դեկրետով նախատեսված ոուսական զօրքերի դուրսքերման կետին, որը ամբողջությամբ անհրագործելի էր դարձնում դեկրետի մնացած հայանապատ կետերը: Մենք հիշեցինք դեկրետի մասին, որպեսզի փորձենք բացատրություն գտնել բոլշևիկների նման գործելառնին: Խորհրդահայ պատմագրության մեջ այդ գործելառնի վերաբերյալ ընդունված է այն կարծիքը, որ Ստեփան Շահումեանը կատարում էր Ժողկումխորի՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետով և Կովկասի արտակարգ ժամանակավոր կոմիսար նշանակվելու մասին որոշմանը իր վրա դրված խնդիրները<sup>15</sup>: Հետաքրքիր է, թէ ինչ խնդիրներ էին դրանք: Անդրադառնանք փաստաքրերին: «Թուրքահայաստանի մասին» դեկրետի 1-ին կետով Ստ. Շահումյանին հրահանգվում էր խաղը հանձնաժողովով ստեղծել Արևմտահայաստանի սահմաններից զօրքերը հանելու ժամկետն ու եղանակները սահմաններու համար<sup>16</sup>, իսկ թիֆլիսյան ծրագրով Շահումյանը պետք է զանար, որ ոուսական զօրքերը մնան ճակատում: Եվ երկրորդ, որ դեկրետների 16-ին Ստ. Շահումյանին Կովկասի արտակարգ ժամանակավոր կոմիսար նշանակվելու մասին որոշման մեջ, բացի կոմիսարի պաշտոնում նշանակվերց, որևէ այլ խնդիրի մասին խօսք չկա<sup>17</sup>: Անգամ 1917թ. դեկրետների 18-ին՝ Լենինի ստորագրած հրամանագրում նման պարտավորեցնող խնդիրների մասին ոչ մի ակնարկ չկա<sup>18</sup>: Մեր բոլոր համեմատություններից երևում է, որ նշած երկու փաստաքրերից և ոչ մեկում չի հիշատակվում Շահումյանի վրա դրված այն խնդիրների մասին,

<sup>14</sup> Ա-ուրէն, նշվ. աշխ., էջ 142-143:

<sup>15</sup> Տե՛ս Լ. Խորշուոյան, Սովետական Ռուսաստանը..., էջ 59:

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաքրերում (1828-1923)», Եր., 1972, թիվ 236, էջ 418-419:

<sup>17</sup> Տե՛ս Լ. Խորշուոյան, Ստեփան Շահումյան..., էջ 147-148:

<sup>18</sup> Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական...», № 100, էջ 143:

որոնք նա իբր մտցրել էր թիֆլիսյան ծրագրի մեջ: Ավելին, Շահումյանի հետ մշակած ծրագրում բացարձակապես հակառակ խնդիրներ էին դրված: Դատելով հենց Շահումյանի՝ իրեն կոմիսար նշանակելու առիրով արած հայտարարությունից (այն տպագրվել է 1918թ. հունվարի 31-ին)՝ պարզ է դառնում նրա հիմնական նպատակը. «Միակ ելքն... Կովկասում սովետական իշխանություն ստեղծելն է»<sup>19</sup>: Շահումյանը, հստակ մատնանշելով, որ իր վրա դրված է Կովկասը խորհրդայնացնելու գերխնդիր, բացահայտում է դրանով նաև թիֆլիսյան ծրագրի իրական նպատակը: «Դա ոչ թե Հայաստանի ազգատագրման, այլ խորհրդային իշխանության հաղթանակի համար էր արվում, որի իրականացման համար, ինչպես արդեն մեկ անգամ նշել ենք, բոլշևիկները և մասնավորապես Շահումյանը երկրորդ անգամ չեն կարող անտեսել Անդրկովկասում կարող ուժ հանդիսացող դաշնակցությանը: Վերջինիս հետ էլ Շահումյանը կնքեց «փոխշահավետ» համաձայնություն Թիֆլիսում: Եսկ դատելով նշված համաձայնագրի կետերից՝ Դաշնակցությունը պարտավորվում էր օժանդակել բոլշևիկներին Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատելու գործում՝ փոխարենը ստանալով բոլշևիկների խոստումները Հայկական հարցի դրական լուծման գործում: Իսկ այն, որ Դաշնակցությունը ձևականորեն պետք է հակարողակելիյան դիրքորոշում ընդուներ, պարզ էր: Նման ծրագրի տապալումն ու հատկապես բացահայտումը անկասկած սպառնում էր դաշնակցության և ընդհանրապես հայ ժողովրդի դեմ հանել անդրկովկասյան մնացած ուժերին, որոնց շահերից չեր բխում այդ ծրագիրը: Ակնհայտ էր, որ այս ծրագիրը ավելի շուտ նման է «մուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծին, որտեղ չեր նախատեսվում գործերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից: Թիֆլիսյան ծրագիրը նաև յուրահատուկ կերպով բացում էր «մուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծում առկա փակագծերը: Եթե նախագծում և նաև բուն դեկրետում բացակայում էր Հայաստանի սահմաններում ներառվելիք տարածքների մասին որևէ հստակ տեղեկություն, ապա թիֆլիսյան ծրագրում պարզ նշվում էր, որ «Անդրկովկասում ստեղծում է հայկական կանոնն, ըստ Շահիսարունու սահմանագծման ծրագրի»: Իսկ Շահիսարունու սահմանագծման ծրագրով, կազմված 1916թ., նախատեսվում էր, որ «Արևմտյան Անդրկովկասը բաժանվում էր երկու մասի՝ թրքական և հայկական: Հայկական մասի մեջ նտնելու էին Ղազախ, Գանձակ, Զիվանշիր և Շուշի գավառների լեռնային հայարենակ մասերը և ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի քուրք զյուղական հասարակություններից, որոնք միացվելու էին Կարյագինի թրքական գավառին: Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ թրքական և հայկական, Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը պետք է միացվեին նոր կազմվելիք Ալեքսանդրապոլի նահանգին:

Այսպիսով, ստեղծվելու էր հոծ հայ ազգաբնակչություն ունեցող մի շրջան՝ բաղկացած 4 նահանգից՝ Գանձակի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի»<sup>20</sup>: Այսպիսի փաստարդի մշակմանը բացի Շահումյանից ու նաև Շահվերդյանից, բոլշևիկների կողմից մասնակիցից մասնակից էին դարձել նաև

<sup>19</sup> Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 4, էջ 98-101:

<sup>20</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 24:

Նազարեթյանը, Կասյանը, ուսուցիչ Խանոյանը և Ցինցաձենը<sup>21</sup>: Իր աշխատության մեջ Ռուբենը ավելացնում է նաև. «Քաջի Շահումեանի հետ այդ բանակցութիւններից, Երեւանում զործակցութիւն կար բոլշևիկների հետ: Ասացի, որ Երեւանը Կովկասեան Հայաստանի կեղրոնն էր դարձած այդ ժամանակներում: Իսկ այդ կեղրոնի կեղրոնական անձն էր Արամը: Նա ուղարկում է Թիֆլիսի վրայով այժմ դաշնակցականասէր դարձած Մակինցեանին՝ դեպի Մոսկով: Ջանի որ Արամը չկայ, Մակինցեանին կը մնայ պարզել այն հրահանգները եւ սպասելիքները, որ Երեւանն ուներ Մոսկովայից: Ինձ յայտնի է միայն այսպահը, Արամի տոմսակից: «Ապահով անցկացրէք: Անհրաժեշտ է: Պէտք է մենք ամէն կերպ միանանք Ռուսումին (Քագուին): Քու էշը քշիր: Մեր մեջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»: Այս տոմսակը բաւական էր, որ հասկնալի լինէին Արամի մտահոգութիւնները. նրա հիմնան վրայ էլ, Մակինցեանը ապահով հասաւ Վաղիկավակագ»<sup>22</sup>: Պողոս Մակինցյանը, զատ Արշալույս Աստվածատրյանի, Երևանի հայոց ազգային խորհրդի միակ բոլշևիկ անդամն էր<sup>23</sup>: Բոլշևիկյան կողմի նման կազմը և Մակինցյանին Մոսկվա գործուղելլ հուշում էին, որ թիֆլիսյան ծրագրում բոլշևիկյան կենտրոնական հեկավարությունը պետք է որ իր դերակատարումը ունեցած լիներ: Ի վերջո, ինչքան էլ Շահումյանը հեղինակավոր բոլշևիկ լիներ, նման հարցեր ինքնազլուխ չեր կարող լուծել: Այստեղ կարելի է եղարկացնել, որ բոլշևիկները, ինչպես դաշնակները, երկակի խաղ էին վարում: Մի կողմից նրանք, զիտակցելով իրենց դիրքերի բուկությունը Բրեստ-Լիտովսկում, պատրաստ էին լուրջ զիջումների՝ այդ քվում Արևմտահայաստանի հաշվին, մյուս կողմից էլ դաշնակցության հետ ծրագրեր էին մշակում Կովկասում խորհրդային կարգեր հաստատելու համար՝ փոխարենը նրանց խոստանալով հայանապատ ծրագրերի իրականացում: Դա ավելի ճիշտ կիմներ անվանել ոչ թե Հայաստանի ազատագրում, այլ փոխանակում: Ըստ Էուրյան՝ բոլշևիկները պետք է ստանային խորհրդայացված Արևմտյան Հայաստանն ու դաշնակների օժանդակությունը Անդրկովկասի խորհրդայնացման գործում, իսկ փոխարենը ապահովեին Արևմտահայաստանի անկախությունն ու այստեղ Դաշնակցության իշխանության գալը:

Թիֆլիսյան բանակցություններում բոլշևիկները ավելի քիչ բան ունեին կորցնելու: Ինչպես հետագա ցույց տվեց, բոլշևիկները Դաշնակցությանը արագ փոխարինող գտան՝ ի դեմս Գերմանիայի ու հատկապես Թուրքիայի: Իսկ դաշնակները, բնականաբար, կորցնելու շատ բան ունեին, ինչը նրանց ստիպեց դիմելու, այսպես կոչված, «քիկունքային քաղաքականության»: Այն ենքաղը էր, որ Դաշնակցությունը պետք է ձևականորեն Անդրկովկասի միացյալ կառավարությունում հակարողակայիսան կողմնորոշում ցուցաբերելու ու միաժամանակ գաղտնի բանակցություններ վարել բոլշևիկների հետ: Չնայած գործադրած ջանքերին՝ թիֆլիսյան բանակցությունները իրականություն չդարձան. Շահումյանը չկարողացավ համայնքել ալեքսանդրապոլյան ուժերը, հայ զինվորականությունը ժամանակին

<sup>21</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 263:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 143:

<sup>23</sup> Տե՛ս «Արամը. մահուած յիսմանեակին առիւ», Եր., 1991, էջ 90:

Հկենտրոնացվեց համաձայնագրով նախատեսված վայրերում: Բոլշևիկյան դեկապուրյունն էլ այլ տարբերակ նախընտրեց՝ կնքելով Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Բոլշևիկյան կենտրոնի՝ թիֆլիսյան համաձայնագրին ցուցաբերած «պատվավորակությունը» խոսում է այն մասին, որ նրանք չեն շտապում ընդունել մի վաստարուղը, որը կարող էր վնասել իրենց Բրեստ-Լիտովսկի բանակցություններում: Ավելին, բոլշևիկները նախընտրեցին Քառյակ միության օգտին արված զիջումների գնով ապահովել, թեկուց ժամանակավորապես, որոշակի ներկայություն Անդրկովկասում, քանի դեռ իրենց իշխանության հիմքերը չեն անրապնդել: Բոլշևիկ-դաշնակցական թիֆլիսյան համաձայնությունը մնաց թղթի վրա: Հետագայում կողմերը նմանատիպ ծրագրերի մշակման փոխարեն նախընտրեցին համագործակցել առանձին հարցերի շուրջ, օրինակ՝ համագործակցությունը Բարվում, որտեղ կողմերին միավորում էր ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայրարք:

**М. С. ОГАННИСЯН – Переговоры большевиков и дашнаков в Тифлисе (декабрь 1917 г. – январь 1918 г.).** – В статье делается попытка представить полную историю рассматриваемой темы. Анализируя касающиеся ее источники и исследования, автор показывает необходимость переговоров и истинные причины их провала.

С 4 декабря до конца января 1917 г. в Тифлисе проходили переговоры между представителями дашнаков и большевиками, завершившиеся подписанием договора. Согласно этому договору, в результате советизации Закавказья большевики должны были обеспечить физическую безопасность армян, признать Восточную Армению самостоятельным округом в составе Советской России, объявить Западную Армению независимой. К сожалению, соглашение не было реализовано, так как, во-первых, большевики не смогли объединить в Закавказье войска, покидающие фронт под знаменем революции, во-вторых, они предпочли Брест-Литовский мирный договор, забыв о подписанным соглашении.

## ВОСТОК И ЗАПАД В СВЕТЕ ГЕНЕЗИСА ХРИСТИАНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ

Н. С. ЩЁКИН  
(Минск)

В эллинистическую эпоху сознание человека яснее и полнее репрезентировало напряженность и противоречивость социального бытия, более остро осознавало крушение прежних идейных постулатов. Идея личности, родившаяся в греческом полисе, нуждалась в практической реализации. Однако под давлением имперской системы идея личности могла развиваться в абстрактном плане, умозрительно. Не найдя выхода к живому человеку, эта идея не смогла перейти в социальную плоскость. Единственной «альтернативой» у нее оставался уход в плоскость отвлеченных переживаний. Идея личности ушла в сферу имманентной рефлексии, регламентирующуюся духом, в котором постепенно обретала свои формы.

Политическая реальность не предоставила возможности огромному числу людей обрести альтернативу существующему порядку вещей. В свою очередь, такое положение породило надежду людей о спасении в потустороннем мире. Таким образом, медленно и неотвратимо вставал уже и принимал зримые очертания совсем новый мир<sup>1</sup>.

Многообразие социокультурных и религиозных форм Римской империи неоднозначно было воспринято некоторыми провинциями. С особым противодействием культурной экспансии эллинизма пришлось столкнуться в Иудее.

Причины неприятия эллинизма иудейской культурой, отсутствие желания вести диалог необходимо искать в культурно-исторических традициях Иудеи.

Народ Израиля, состоявший из 12 племен (колен), поселившийся в гористой местности между Средиземным морем и рекой Иордан, рано обнаружил стремление к автономности от других народов. Сравнительно рано выработав монотеистическую парадигму (Ис. 44: 9-20, Иср. 10: 3-5, Исх. 20: 3,4, Цар. 18:27, 17:35, Исх. 34:14, 12), евреи поняли свою религиозную особенность как форму исключительного положения израильского народа в окружающем мире<sup>2</sup>.

Религиозная идея представила Израиль как священный организм, увенчанный верховным жрецом. Теократическая система управления

<sup>1</sup> См.: Р. Тарнас, История западного мышления (пер. с анг. Т. А. Азаркович). М., 1995, с. 78.

<sup>2</sup> См.: Э. Шюре, Великие посвященные. Очерк эзотеризма религий (пер. с франц. Е. Писаревой), М., 1990, с. 344-351.

## ԲԱՆԱՎԵՇ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

<b>Գալստյան Ս. Ա.</b> - Անորոշ դերբայլ բառակազմական անփոփոխ հիմք .....	1,98
<b>Զաքարյան Ս. Ա.</b> - Միջնադարյան հայ վիլխսովայության մեջ ունի- վերսալիաների հիմնահարցի մեկնաբանման վերագնահատ- ման փորձ .....	3,90
<b>Ղարիբյան Ի. Գ., Վարդանեսովա Տ. Վ.</b> - Սեղրածորի խաչքարերի թվագրման հարցի շուրջ (ռուս.) .....	2,105
<b>Միրզոյան Հ. Ղ.</b> - Գրիգոր Նարեկացին և հայ առակազմությունը ....	3,77
<b>Մուշեղյան Ա. Հ.</b> - Դիտողություններ Խորենացու պատմության ա- նունների և արտահայտությունների առիթով .....	2,92
<b>Պետրոսյան Վ. Զ.</b> - Տեսիլները Զարենցի անվարտ մատյանում (րո- վանդակային վերլուծության փորձ) .....	2,103
<b>Պետրոսյան Վ. Զ.</b> - Գերինչյունը որպես գերինչույթի խոսքային հա- մարժեր .....	3,103

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Ազատյան Ս. Ա.</b> - Արդի հայերենի բառասկզբի հնչյունական գուգոր- դումների հարցի շուրջ .....	2,149
<b>Ալեքսանյան Ա. Ա.</b> - Անձի հաղորդակցական ակտիվության զարգաց- ման հարցի շուրջ .....	2,168
<b>Աղախանյան Հ. Հ.</b> - Հայ վաճառականության դերը ժողովուրդների շիման ու փոխհարստացման գործընթացում .....	1,176
<b>Բարսեղյան Գ. Ռ.</b> - Մարզական գովազդի լեզվանական առանձնա- հատկությունները անգլալեզու ամսագրերում .....	3,183
<b>Գևորգյան Գ. Ա.</b> - Some և այս դերանունների օգտագործումը պայմա- նական նախադասություններում .....	2,157
<b>Դիլբարյան Ն. Հ.</b> - Տեղանունների կրծատման, տարբերակային ձևե- րի առաջացման լեզվական և արտալեզվական հիմքերը .....	1,118
<b>Եղիազարյան Ա. Ա.</b> - Արարեների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ .....	1,157
<b>Հայրապետյան Գ. Ռ.</b> - Հայ հոգեբանական ժառանգության մոռաց- ված էջերից մեկը (ՄՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԸ ԻԻՄՆԱԴՐՄԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ) ...	3,164
<b>Հանանյան Գ. Կ.</b> - Բայական հետզրաբարյան գոյացություններ կի- լիկյան բարբառներում .....	1,196
<b>Հարությունյան Ռ. Վ.</b> - Հայ եկեղեցու թեմական բաժանումը Մարզ- պանական Հայաստանում .....	2,141

<b>Հովհաննիսյան Ս. Ս.</b> - Բոլշևիկներ-Դաշնակցություն բանակցու- թյունները Թիֆլիսում (1917թ. դեկտեմբեր - 1918թ. հունվար) ....	3,131
<b>Հովսեփյան Ն. Գ.</b> - Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը, դրա պատմական պայմաններն ու հետևանքները .....	2,162
<b>Ղուկասյան Ս. Վ.</b> - Մատրեսով Ավետարանի հարցական նախադա- սությունների առանձնահատկությունների շուրջ .....	2,128
<b>Մարգյան Հ. Ֆ.</b> - Ներսես Շնորհալին հանելուկագիր .....	1,165
<b>Մանասյան Վ. Գ.</b> - Կոռպերացիայի դերը ՀՀ-ում աշխատանքի հասա- րակական բաժանման կատարելագործման և զյուղատնտե- սական արտադրության մասնագիտացման գործընթացում ...	2,176
<b>Մելքոնյան Գ. Ա.</b> - Կնոջ ազատության և հասարակական դերի հար- ցերը «Որոգայր փառաց»-ում .....	1,126
<b>Միրզախանյան Ռ. Վ.</b> - Հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1956-1966 թվականներին .....	1,135
<b>Նահապետյան Ռ. Ա.</b> - Հետօններյան բառասունքին առնչվող սովո- րույթներն ու ծեսերը Աղճնիքում .....	3,114
<b>Նիկողոսյան Գ. Վ.</b> - Հայերենի կովկասյան փոխառությունների հար- ցի շուրջ .....	3,156
<b>Շահինյան Ա. Կ.</b> (Սանկտ Պետերբուրգ) - Հայաստանի նախարարու- թյունների բանական ու տարածքային կազմը արարենի օ- րոք (ռուս.) .....	3,148
<b>Շյուկին Ն. Ս. (Սինսկ)</b> - Արևելքն ու Արևմուտքը քրիստոնեական քա- ղաքակրթության ծագման լույսի ներքո (ռուս.) .....	3,139
<b>Պետրոսյան Ն. Լ.</b> - Հովհաննավանքի պատկերաբանդակների մի քանի առանձնահատկությունների մասին .....	1,171
<b>Պետրոսյան Վ. Գ.</b> - Օրենսդրության և ժուռնալիստական եթիկայի փոխհարաբերության հարցի շուրջ .....	3,178
<b>Սիմոնյան Լ. Գ.</b> - Մի էջ պոլսահայ երգիծաբերերի բանավեճի պատմությունից .....	3,172
<b>Սուրբիայան Հ. Կ.</b> - Հայ-աղբքեջանական տարածքային խնդիրների լուսաբանումը Ռուբեն Տեր-Սինասյանի աշխատություններում .....	1,186
<b>Վարդանյան Ե. Մ.</b> - Քաղաքական մասնակցության գենդերային հիմնախնդիրները .....	1,147
<b>Վարդանյան Ս. Վ.</b> - Որոշ նկատառումներ «իմտերաբետացիա» տեր- մինի կիրառության վերաբերյալ .....	3,124
<b>Օհանյան Ս. Ն.</b> - Պիտիրիմ Սորոկինը Երվանդ Ֆրանգյանի մասին ..	2,121